

Թողունք որ Առաքելոյն նպատակը չէ այն
 Թղթին մէջ սուրվեցնել Հոռոմայեցոց՝
 որոնց հաւատքը «Պատմեայ եճ ընդ ամե-
 նայն աշխարհն», թէ Մկրտութեան խոր-
 հուրդն ինչպէս կ'ըլլայ:

Հ. ԳՐԻԳՐ ՍԱՐԳՍԵԱՍ

(Շարունակելի)

ՊՈՒՏՎԵՆԵՆԵ ԼԱՅՅԵՐԷ



Պուտսվենեյի հայ գաղթականութիւնն
 երկու տարրերէ կը բաղկանայ. բազմաթիւ
 և աչքի զարնող տարրը կազմողներն են
 Հունգարահայերը, որոնցմէ մաս մը հարիւ-
 րեակ մը տարիներէ ի վեր հաստատուելը են
 քաղաքիս մէջ՝ Դրանսիլուանիայի գանա-
 զան կողմերէն հետզհետէ հոս հաւաքուե-
 լով, իսկ մաս մ'ալ վերջին համաշխար-
 հական պատերազմին հետեանցով այս
 յետին քանի մը տարիներու ընթացքին
 մէջ նոյնպէս Դրանսիլուանիայի այլ և այլ
 կեդրոններէն հոս գաղթելը են իրենց ըն-
 տանիքներով: Երկրորդ տարրը կը կազ-
 մուի՝ վերջերս Արեւելքէն Հունգարիա
 ապականած երսուելի չափ ընտանիքներէ
 և հարկերեակ մ'ալ առանձնականներէ,
 որոնց գումարը սակայն երկու հարիւր ան-
 հատականներէ աւելի չէ. մինչդեռ Հուն-
 գարահայերու (մօտադրապէս 600 ընտա-
 նիք) թիւը գրեթէ 4000ի կը հասնի, որոնք
 սակայն հայախօս չեն, թէ և սրտով հայ
 են և հայ ըլլալինն իրենց պատիւ կը
 յայտարարեն:

Այս վերջիններս ընդհանրապէս պետա-
 կան այլ և այլ հաստատութեանց պաշ-
 տօնաններու դասակարգին կը վերաբերին,
 որով ազդեցիկ դիրք մ'ունին և քիչ թէ
 շատ բարեկեցիկ վիճակի մէջ կ'ապրին,
 որքան որ ներկայ ժամանակիս տարօրի-
 նակ պարագաները կը ներեն: Իսկ արեւ-
 ւելահայ գաղութին մէջ կը գտնուին աչքի
 զարնող 20-25 վաճառականներ և առեւ-
 տրականներ, մնացածները (ինչպէս ամէն
 երկիրներու մէջ ջրուած հազարաւոր Հա-

յնր) դեռ ևս անկայուն գործերով զբաղած՝
 իրենց օրականը ճարիրու ջանքով կ'աշ-
 խատին, չուզելով՝ մանաւանդ թէ գովելի
 զգացումով ամօթ համարելով՝ ուրիշներու
 ծանրաբեռնութիւն մ'ընել իրենց կեանքը:
 Վերոյիշեալ հայ-վաճառականներու զբա-
 դանքին զլիաւոր մանաճիւղն է գորգերու
 շինութիւնն ու վաճառումը, հնավաճառու-
 թիւնն և քանի մ'արուեստներ: Հայերու
 գործունէութիւնը բնականապէս դեռ շատ
 սկար՝ բայց իրական մրցում մը կը նկա-
 տուի Հունգար Պետութենէն տեղական
 Հրեաներու շահադիտութեանց դէմ, որոնք
 Պուտսվենեյի (ըսենք մանաւանդ Հունգա-
 րիոյ) առեւտրական հրապարակին և դրա-
 մատներուն գերազդեցիկ տէրը դարձելը են:
 ուստի Հայերու ձեռնարկները պետութեան
 կողմանէ բարոյական դիւրութիւններու
 կ'արժանանան և կը քաջալերուին:

Թէչպէտ և տեղւոյս նոր գաղթական
 հայութիւնն ունի իրեն սեփական կազմա-
 կերպուած արեւելահայ-վարչութիւնը, բայց
 իրենք ոչ միայն համակրական ընդունե-
 լութիւն գտել են բնիկ Հայերէն՝ այլ և
 վերջիններու հետ համազգային սերտ կա-
 պակցութիւն ունին: Միակ Հայկակուն-
 Միութիւն մը Հունգարահայոց՝ հին և նոր
 գաղթականներն իրար հետ զօգած է, և
 ամէն երկուշաբթի երեկոյեան տեղի ունե-
 ցած ընտանեկան ազգային համախմբու-
 թիւն մը՝ փոխադարձ շօշափման մէջ կը
 դնէ զիրենք, և հայ սրտի մ'համար մեծ
 հաճոյք կ'ընծայէ՝ երբ միեւնոյն քրիստոնէ
 մէջ կը տեսնես որ հայագրի նախաբար
 մը միեւնոյն սեղանի շուրջը բազմած հայ-
 վաճառականին հետ, և կամ հայագրի
 բարձրագոյն դասակարգի պետական պաշ-
 տօնեայ մը, ազնուականութեան տիղզուով
 օժտուած ընտանիքի մը հայրը՝ որ մի և
 նոյն սեղանի թղորը նստած հայ-արուես-
 տաւորին հետ իբրև երկու ազգային եղ-
 բայրներ՝ ընտանեկան և կամ հայութեան
 վերաբերեալ ինդիւրներու խօսակցութեամբ
 կը տեսակցին ու խօսակցին, ինչպէս հայ-
 ազգի ազնուական տիկինն և օրիորդը՝
 իր քրոյրակից արեւելահայ տիկնոջ և օրիոր-

դին հետ, Հայկական—ըլիպին նպատակն՝ այսպիսի համախմբութիւններու ժամանակ ոչ միայն ազգային այս դասակարգերն իրարու մերձեցնեն է մի և նոյն սեղանի վրայ ուսելու և ըմպելու գործով, այլ և անոնց ստէպ ընծայելն է հասնել ժամանց մը՝ ազգային և հունգար զեղարուեստական ներկայացումներով կամ երգի և պարի փոքրիկ նուագահանդէսով մը:

Հունգարիոյ Հայկական—Միութիւնը՝ որ ոչ միայն Հունգարիոյ Հայութեան, այլ և ընդհանուր Արուսթեան շահերու տեսած կէտով ալ կը ջրարի, կազմակերպած է նաև հուզար—նայակակն վոճատակահակահ ընկերարիւն մը, որուն նպատակն է Հունգարիոյ և Հայաստանի կամ Արեւելքի միջև առևտրական կապ մը հաստատել: Այս վաճառականական ընկերութիւնը բաժանորդագրութիւններէ ձեացած ընկերութիւն մ'է, որուն յաջող գործունէութեան իրրև հաւաստի նշան կըրտայ համարուիլ այս պարագան՝ որ տարւոյս ընթացքին մէջ որոշումն տուաւ իր հիմնական 4,000,000 քորոնայից դրամազուխը՝ նոր բաժնետոմսերով 8, 000, 000/ի բարձրացնելու, բաժնետոմսեր՝ որոնք անմիջապէս և ամբողջապէս վճարուեցան հին ու նոր բաժնորդներէ: Թէ՛ Հայկական—Միութեան և Թէ՛ Հայ—Հունգար վաճառականական ընկերութեան վարչական խումբերն իրենց ժողովները կ'ընեն վերոյիշեալ Հայկական—ըլիպին կից սենեկի մը մէջ՝ հրկուշաբթուան համախմբութեանց առիթով, յետ որոյ իրենց ալ կը մասնակցին համախմբութեան:

Պուտափեշտի Հայերուն այսպիսի բարեկամ միճակին մեծ պակասութիւն մ'էր հայազմ յատուկ քահանայի մը և սեփական հայ—իրաւասական իշխանութեամբ եկեղեցիի մը և հայ դպրոցի մ'անգոյուութիւնը: Այս վերջին պէտքն զգալի էր մանաւանդ նոյն գաղութին համար, որ սրտացաւութեամբ կը տեսնէր թէ առանց վերոյիշեալ պակասութիւնները լեցնելու՝ իրենց որդիներն ալ հին գաղութին սերունդին նման պիտի մոռնային և կամ քնաւ

պիտի չստվորէին հայ լեզուն, և ոչ միայն լեզուով ու զգացմունքով, այլ նաև ծէսով ալ պիտի յեղափոխուէին օտար տարբերու: Զգալի էր նաև այն Հունգարահայերուն համար՝ որոնք Իրանսիլուանիայէն եկած են, ուր թէև լեզուով հունգարացած՝ այլ հոն իրենց յատուկ հայ ծէսն և եկեղեցին և քահանաներն ունէին: Հայկական—Միութեան՝ ընդհանուր Հունգարահայոց մէջ արթնցուցած հայ—զգացումի հետևանքով՝ նաև Պուտափեշտի բնիկ հայութեան մաս մ'ալ երկու տարիէ վեր կը փափաքէր և դիմումներ կ'ընէր միւս մասերուն հետ՝ որ որ յուսալի էր՝ որպէս զի այդ վերոյիշեալ պակասութեան դարմանն ընէր, այսինքն՝ ունենար հայ—վարժարան մը, հայ—քահանայ մը և հայ—եկեղեցի մը, որոնց համար որքան իրենց նիւթական ուժէն վեր գոհարբութիւն կարևոր է ժողովրդեան կողմէն՝ կըրնան հասկընալ միայն այն հայ գաղութները՝ որ նմանորինալ պակասութեան պարագաներու մէջ կը գտնուէին երբեմն և կամ կը գտնուին ներկայիս:

Արդ, Պուտափեշտի համախումբ Հայութեան ըրած դիմումներուն հետևանքով և բարձրագոյն եկեղեցական իշխանութիւններու միջնորդելով՝ տարւոյս ընթացքին մէջ սկզբնաւորութիւնն եղաւ այդ պակասութեանց դարմանը տանելու, ըսկըզբնաւորութիւն մը՝ որ բարեբախտաբար ոչ լուկ վստահութիւն կը ներշնչէ, այլ և սեղւոյս Հայութեան բաղձանքէն և յուսացածէն շատ աւելի մեծագոյն բարիք մը պիտի պարգեւէ անոր:

Այդ բարիքը պիտի պարգևուի Պուտափեշտի Հայութեան՝ Վենետիկի Միսիթարեան Միաբանութեան ձեռքով, որ արձագանգ տալով իրեն եղած աղերասարբերուն՝ իր անդամակիցներէն Հ. Աթանաս Տիրոյեան վարդապետը հոս ուղարկեց՝ որ այդ ազգօգուտ ձեռնարկին կարևոր նախապատրաստութիւններն ընէ: Այդ հունգարերենի ծանօթ վարդապետը՝ որուն քնաւորութիւնն, սկզբունքներն ու գործունէութիւնն արդէն ծանօթ ըլլալով սեղւոյս Հայերուն՝ իրեն

Դրանսիրուանիոյ մէջ երկար տարիններով գտնուած ժամանակէն՝ ժողովրդինէն փափաքուած անձնաւորութիւնն էր, արդէն անցած Մայիսի սկիզբէն ի վեր հոս մեր մէջը կը գտնուի, և կը յուսայ որ քիչ ժամանակէն յաջողի ձեռք բերել Վենետիկ Միտիթարեան Միաբանութենէն կարեւոր միջոցները, որով հնար ըլլայ պատշաճ շէնք մը գնել վանատան մը, եկեղեցւոյ մը և վարժարանի մը բացումը իրականացնելու համար քաղաքիս մէջ. վասն զի Վենետիկ Միտիթարեանը կ'ուզեն ո՛չ միայն իրենցմէ պարզապէս անձ մը նուիրել Պուտափեշտի Հայերուն փափաքը գործացնելու նպատակաւ, այլ հաստատել հոն վանատուն մը՝ քանի մը վարդապետներէ օտտուած, ձեռք բերել և վարել Հայոց համար յատուկ իրաւասական իշխանութեամբ ժողովրդապետութիւն մը կամ՝ ինչպէս մենք կ'ըսենք՝ հայ-ծուխ մը, բանալ վարժարան մը՝ ուր ոչ միայն Պուտափեշտի հայ զաւակները կրթուին, այլ և Դրանսիրուանիոյ, Պուլղարիոյ և ուրիշ գաղութներու հայ աշակերտներն ալ կարենան զիշերօթիկ ընակութեամբ և վարդապետներուն խնամքով՝ յատուկ ծրագրի մը համաձայն կատարել ուսմանց ընթացքն աւարտել Հունգարի Պետութեան բարձրագոյն վարժարաններու և Համալսարանաց մէջ. Ժողովուրդն՝ իր միջոցներուն ներելով՝ յօժարակամ ձեռնտու կ'ուզէ ըլլալ այս ազգօգուտ գործին յաջողութեան, և ինքզինքը պարտաւորած է առ այժմ իր Հոգեւոր Հովիւին գէթ ապրուստն ապահովելու, բայց թէ՛ վանատան ու վարժարանի համար կարեւոր շէնքին գնումը և թէ՛ անոնց մէջ ապրող և աշխատող վարդապետներուն ապրուստը Միտիթարեան Միաբանութեան մեծանձնութեան և ազգասէր անձնանուիրութեան պիտի պարտինք Պուտափեշտի Հայերս:

ՀԱՅ ԳԱՂԹԱՎԱՆ



ԳՊՐՈՑԱԿԱՆ ԱՍՎԵՐՁԻ ՀԱՆԴԵՍՆԵՐ

Ի ՎԼԻՆԵՍԻԿ

Ջանասիրութեան առաջին հանդիսաւոր վարժատրութիւնը տեղի ունեցաւ Յուլիս 8 ին՝ Մ. — Ռափայէլեան վարժարանի Դահլիճին մէջ.

Հրաւիրուած էր Ն. Վսեմ. Լա Ֆրանզէն Պատրիարքը, որուն մուտքը ծափերով ողջունուեցաւ: Ուխտիս Աթոռակալ Վարդապետէն և բոլոր Մեծ. Հայրերէն զատ՝ Պետական ու Վաղաքական Իշխանութիւնը պատուած էին սոյն հանդէսը Կերկայացուցիչներով: Կերկայ էին նաև բազմաթիւ Հայ ընտանիքներ և օտար անձնաւորութիւններ, հանդիսաւորն ըլլալու վարժարանիս երիցագոյն սաներու այս աւարտաւ հանդէսին:

Բնօնցիլագուալի «Մարտա — Ռափայէլ» նուագը՝ խմբերգով ու գործիներով յայտագրին ա. մասը կը կազմէր: Յետոյ բեմ բարձրացաւ Լիկէնին Տեսուչը Հ. Գ. Վ. Կահապետեան և աշակերտաց ուղղեց Հոսկրանք մը. « Այս տարուան ուսմանց նախօրեակին, ըսաւ ան, միասին պատերազմ յայտարարեցինք սոցիտարեան դեմ: Մեր սրտոցան միացեալ ձեւատր տեսութեան և ուսուցչական կազմին ազնիս մրցակրոյ՝ միասիրտ դիմարեց՝ գորանայով երոպեան քաղաքակրթութեան մեզ ընձնուած բոլոր միջոցներով՝ մարդութեան մեծ շխմանոյն » : Բացատրեց յետոյ թէ Հայաստան որ կրցաւ ցարկ տոկալ՝ ուրիշ բանով չէր եթէ ոչ մտաւորական մշակոյթով, յոյն-հռովմական քաղաքակրթութեան սիրով: Հ. Կահապետեան մինչ յիշեցուց սաներուն՝ անցեալ գեղեցիկ օրերու հետ ապագայ կեանքի երջանկութեան մասին յորդորներ՝ յանձնարարեց անոնց, որ չմոռնան սքանչելին Վենետիկ՝ իրենց երկրորդ ծննդավայրը: Թուեց հաստատութեանս նախկին մեծանուն աշակերտներէն մէկ քանին՝ գոչելով այսպէս. « Վարժարանին համարաւ ոչ քե իր շքեղ շխնուածքով՝ այլ այրպիսի ընտր